ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

<<ԵՊԲՀ-ՊԸԾՁԲ-17/1>> ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

ք. Երևան **_03_ _փետրվարի_ _2017թ._**
ժամը _10[00]_

Մասնակցությամբ՝
Հանձնաժողովի նախագահ՝ **Ս. Բարոյան**
Հանձնաժողովի անդամներ՝ **Վ. Մամիկոնյան, Ա. Շահնազարյան**
Հանձնաժողովի քարտուղար՝ **Պ. Գաբրելյան**

1. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին
(Ս. Բարոյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ սահմանված ժամկետում հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակիցների		
	Անվանումը	**Գտնվելու վայրը (հասցեն)**	**Կապի միջոցները**
1	ՀՀ Ո Պետական պահպանության գլխավոր վարչություն	ք. Երևան, Քանաքեռ 14փ. 1շ.	Էլ. հասցեն՝ ppgv_gnumner@mail.ru, Հեռ. 055-08-90-20
2	<<ԱՐ-ՄՈԲԻԼ>> ՓԲԸ	ՀՀ, ք. Երևան, Արաբկիր 49 փող., թիվ 1 տ.	Էլ. հասցեն՝ law@armobil.am, info@armobil.am, Հեռ. 010-20-02-65
3	<<Սիլեր>> ՍՊԸ	ք. Երևան, Ահարոնյան 2/6	Էլ. հասցեն՝ Siler2002@gmail.com, Հեռ. 010-20-09-14

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

2. Տեղեկատվություն հայտեր պարունակող ծրարների կազմման և ներկայացման համապատասխանության մասին
(Ս. Բարոյան)

2.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտեր պարունակող ծրարները կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:
Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

3. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի (հայտում առկա փաստաթղթերի)՝ հրավերի պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին
(Ս. Բարոյան)

3.1 ՀՀ Ո Պետական պահպանության գլխավոր վարչության կողմից ներկայացված հայտը (հայտում ներառված փաստաթղթերը) կազմված են հրավերի պահանջներին համապատասխան, բացառությամբ՝

- Տուժանքի մասին համաձայնագրում (Հավելված 9) նշված ամիսը, ամսաթիվը չի համապատասխանում գնման առարկա հանդիսացող ծառայության ձեռքբերման և վերոնշյալ գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամանակահատվածին (02.02.2016թ.):
- Տուժանքի մասին համաձայնագրին (Հավելված 9) կից վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի համաձայն՝ վճարման պահանջագրի համարը լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագիրը ներկայացնելիս:

3.2 <<ԱՐ-ՄՈԲԻԼ>> ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը (հայտում ներառված փաստաթղթերը) կազմված են հրավերի պահանջներին համապատասխան:

3.3 <<Սիլեր>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը (հայտում ներառված փաստաթղթերը) կազմված են հրավերի պահանջներին համապատասխան:

3.4 Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 44-րդ կետի 4)-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով վերոգրյալը՝ հանձնաժողովը որոշեց ՀՀ Ո Պետական պահպանության գլխավոր վարչության կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

4. Տվյալներ մասնակիցների կողմից ներկայացրած գնային առաջարկների մասին (Ս. Բարոյան)

4.1 Մասնակիցների կողմից առաջարկված գնային առաջարկները ներկայացված են ստորև.

Հ/հ	Մասնակիցների անվանումները	Մասնակիցների կողմից առաջարկված գները, ընդ որում՝ (ՀՀ դրամ)				
		Ինքնարժեք	Շահույթ	Առաջարկված գինը (առանց ԱԱՀ-ի)	ԱԱՀ	Առաջարկված ընդհանուր գինը
1	ՀՀ Ո Պետական պահպանության գլխավոր վարչություն	12000000	0	12000000	0	12000000
2	<<ԱՐ-ՄՈԲԻԼ>> ՓԲԸ	10340000	660000	11000000	2200000	13200000
3	<<Սիլեր>> ՍՊԸ	6416000	713000	7129000	0	7129000

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

5. Պարզեցված ընթացակարգի շրջանակներում առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին (Ս. Բարոյան)

5.1 Մասնակիցների զբաղեցրած տեղերի մասին տվյալները ներկայացված են ստորև.

Մասնակիցների զբաղեցրած տեղերը	Մասնակիցների անվանումները	Մասնակիցների կողմից առաջարկված գները, ընդ որում՝ (ՀՀ դրամ)				
		Ինքնարժեք	Շահույթ	Առաջարկ-ված գինը (առանց ԱԱՀ-ի)	ԱԱՀ	Առաջարկված ընդհանուր գինը
1	<<Սիլեր>> ՍՊԸ	6416000	713000	7129000	0	7129000
2	<<ԱՐ-ՄՈԲԻԼ>> ՓԲԸ	10340000	660000	11000000	2200000	13200000

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

6. Գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից կատարվելիք գործողությունների մասին (Ս. Բարոյան)

6.1 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան՝

ա) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին և երկրորդ տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերի 2.3 կետի <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ.

բ) Ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2017 թվականի փետրվարի 09-ը ներառյալ, ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը.

գ) 6.1 կետի բ) ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ **Ս. Բարոյան**
(ստորագրությունը)

Հանձնաժողովի անդամներ՝ _____ **Վ. Մամիկոնյան**
(ստորագրությունը)

_____ **Ա. Շահնազարյան**
(ստորագրությունը)

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ **Պ. Գաբրելյան**
(ստորագրությունը)